ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
SAINT GREGORY THE ILLUMINATOR ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ**

08.06.2026

# Որոշում

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ «Կարգ») 32-րդ կետի 19-րդ ենթակետը «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/44» ծածկագրով գնման ընթացակարգի 46, 48, 49, 53-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել ՕԼ ՔՎՈԼԻԹԻ ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի կողմից ՕԼ ՔՎՈԼԻԹԻ ՍՊԸ-ի համակարգի միջոցով ներկայացրած հայտում արձանագրվել էին անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես. ՕԼ ՔՎՈԼԻԹԻ ՍՊԸ՝ առաջարկում բացակայում են հավելված 1-ը, սյունակների տվյալները: Իրական շահառուի լինկն ակտիվ չէ: Առաջնորդվելով «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/44» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ մասնակցին առաջարկվել էր ծանուցման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիմքով 46, 48, 49, 53-րդ

ՀՀ, Երևան 0056, Գյուրջյան 10
10Gyurjyan st, Yerevan 0056, RA
+374 11 60 00 03
86 03
info@sglmc.am
www.sglmc.am

չափաբաժինների մասով ՕԼ ՔՎՈԼԻԹԻ ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելը կամ ամբողջական չշտկելը հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Այսպիսով, ՕԼ ՔՎՈԼԻԹԻ ՍՊԸ-ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, ինչը հիմք է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) համաձայն վերջիններիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am և միաժամանակ կցված են eauction.armeps.am հարթակներում:

Հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված փաստերը՝

ՀՀ, Երևան 0056, Գյուրջյան 10
10 Gyurjyan st, Yerevan 0056, RA
+374 11 60 00 03
+374 11 60 00 04
info@sglmc.am
www.sglmc.am

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
SAINT GREGORY THE ILLUMINATOR ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ՈՐՈՇԵՑԻ

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանները չխախտելու հանգամանքներ ի առաջացման ամսաթիվը | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/44» | 46, 48, 49, 53 | 46-երկարացուցիչ բարձր ճնշմամբ, 48-Բազմաֆունկցիոնալ երկարացման գիծ առանց ասեղի, փականով միլուսանցքանի, 49-Բազմաֆունկցիոնալ երկարացման գիծ առանց ասեղի, փականով եռլուսանցք, 53-Պլևրալ հեղուկի կոտակիչ տարա 2 խոռոչով | 46-2000000 ՀՀ դրամ, 48-1498500 ՀՀ դրամ, 49-2067000 ՀՀ դրամ, 53-3200000 ՀՀ դրամ | ՕԼ ՔՎՈԼԻԹԻ ՍՊԸ | 01310728 | ք.Երևան, Օհանով 62շ., 32բն. | 30.04.2026 | «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓԲԸ» | «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/44» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ | Առկա չէ |

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ